[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
4	Հուլիս	2018 թ.		Ա	8879025207
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
4	Հուլիս	2018 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	
Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար			

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման խմբագրը (ՀՎՀՀ)	0 0 1 1 3 1 2 6
[9] Անվանումը	«ԳԵՈԴԵԶԻԱ ԵՎ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒԹՅՈՒՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 0 1 1 3 1 2 6 / 1
[11] Բանկային տվյալները	Արդշինբանկ Արաբկիրի մ/ճ ՓԲԸ N 247120034787
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ Կոմիտասի պող.նում, 35/2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի		
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3	
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը		
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[19] Լրացուցիչ տվյալներ		
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն	
	Լիազորագիր — Համար	
	Լիազորագիր — Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալակազմը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Արմավիրի մարզի Ջրառատ գյուղական համայնքում գտնվող տարածքի չափագրում և ճշգրտում	հա	7	17857.143		125000	20	25000	150000
Ընդամենը						125000	X	25000	150000

Դուրս գրող՝ GHARAGULYAN RUZAN 5107511171
անունը, ազգանունը

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

04/07/2018 11:20:59

ՈՐՈՇՈՒՄ

Մասնագետ ներգրավելու մասին

« 18» 12. 2017թ. ք.Էջմիածին

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ, արդարադատության փոխգնդապետ՝ Գ.Գասպարյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 57106317 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում 31.05.2017թ. Արմավիրի մարզի դատախազությունից ստացվել է Արթուր Պավելի Պողոսյանի (հաշվառված ք.Երևան Տերյան փողոց 56 շենք 8-րդ բնակարանում) ներկայացուցչի դիմումը այն մասին, որ սեփականության իրավունքի վկայականի համաձայն Արթուր Պողոսյանը հանդիսանում է Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի թիվ 2682006 գույքի՝ (կադաստրային համար 04-085-02-16-0020) հողամասի սեփականատեր, որը առուվաճառքի պայմանագրի հիման վրա 28.12.2010թ. ձեռք է բերել ՀՀ քաղաքացիներ՝ Անահիտ, Հայկ, Ալինա և Ռուդիկ Մինասյաններից: Հիշյալ հողամասը սեփականաշնորհվել է Ջրառատ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 19.09.1992թ. թիվ 7 որոշման հիման վրա, որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

Հողամասի շրջադարձային կետերի կորդինատները տրամադրելու դիմումի վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի «Կենտրոն» սպասարկման գրասենյակից ստացված տեղեկանքի համաձայն կադաստրային քարտեզում հիշյալ միավորը չի տեղադրվել, քանի որ առաջացել է համադրում Մանվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Մարգարայի խճուղի թիվ 17 հասցեում գտնվող հողամասի հետ, ինչի արդյունքում Արթուր Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը ներառվել է Մանվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի կազմի մեջ, որի հետևանքով Արթուր Պողոսյանը զրկվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի նկատմամբ իրավունքից:

Փաստի առթիվ 10.06.2017թ. հարուցվել է թիվ 57106317 քրեական գործը ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով և կատարվել է նախաքննություն:

10.10.2017թ. որոշում է կայացվել դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին:

07.11.2017թ. Փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ից միջնորդություն է ստացվել Ջրառատ համայնքում գտնվող 04-085-02-16-0020 և 04-085-02-16-0017 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերի գեոդեզիական հանույթները տրամադրելու վերաբերյալ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն մասնագետը քրեական գործով չշահագրգռված այն անձն է, որին քրական վարույթն իրականացնող մարմինը նշանակում է իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի

բնագավառներում իր մասնագիտական հմտությունները և գիտելիքները օգտագործելով աջակցելու քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելիս:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետի, 84-րդ, հոդվածի 1-ին և 2-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «Գեոդեզիա և քարտեզագրություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունից Ռուբեն Ժիրայրի Մուրադյանին /քարտեզագրողի, գեոդեզիստի, չափագրողի /հաշվառողի/ հողաշինարարի վկայական №030/՝ թիվ 57106317 քրեական գործով ներգրավել որպես մասնագետ:

2. Որոշման մասին հայտնել Ռուբեն Ժիրայրի Մուրադյանին և ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներին ու պարտականություններին, նախազգուշացնել օրենքով իրենց պարտականությունները չկատարելու համար սահմանված պատասխանատվության մասին:

3. Որոշման օրինակն ուղարկել ՀՀ «Փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ին:

Քննիչ՝ Գ.Գասպարյան

ՈՐՈՇՈՒՄ

Դատաշինարարատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

,,10,, 10. 2017թ. ք. Էջմիածին

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ՝ Ն.Չիչակյանս, քննարկելով վարույթումս քննվող թիվ 57106317 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի բաժնում 31.05.2017թ. Արմավիրի մարզի դատախազությունից ստացվել է Արթուր Պավելի Պողոսյանի /հաշվառված ք. Երևան Տերյան փողոց 56 շենք 8-րդ բնակարանում/ ներկայացուցչի դիմումը այն մասին, որ սեփականության իրավունքի վկայականի համաձայն Արթուր Պողոսյանը հանդիսանում է Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի թիվ 2682006 գույքի /կադաստրային համար 04-085-02-16-0020/ հողամասի սեփականատեր, որը առուվաճառքի պայմանագրի հիման վրա 28.12.2010թ. ձեռք է բերել ՀՀ քաղաքացիներ՝ Անահիտ, Հայկ, Ալիսա, և Ռուդիկ Մինասյաններից : Հիշյալ հողամասը սեփականաշնորհվել է Ջրառատ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 19.09.1992թ., թիվ 7 որոշման հիման վրա, որպես ընդհանուր համատեղ սեփականություն :

Հողամասի շրջադարձային կետերի կոորդինատները տրամադրելու դիմումի վերաբերյալ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի <<Կենտրոն>> սպասարկման գրասենյակից ստացված տեղեկանքի համաձայն կադաստրային քարտեզում հիշյալ միավորը չի տեղադրվել, քանի որ առաջացել է համադրում Մանվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Մարգարայի խճուղի թիվ 17 հասցեում գտնվող հողամասի հետ, ինչի արդյունքում Արթուր Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքը ներառվել է Մանվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող գույքի կազմի մեջ, որի հետևանքով Ա.Պողոսյանը զրկվել է իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի նկատմամբ իրավունքից :

Փաստի առթիվ 10.06.2017թ. ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57106317 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ մի շարք հարցերի պարզաբանման համար պահանջվում են դատաշինարարական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքների իմացության անհրաժեշտություն, ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր 243-244 հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Թիվ 57106317 քրեական գործով նշանակել դատաշինարարական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ <<փորձագիտական կենտրոն>> ՊՈԱԿ-ի փորձագետներին:

2.Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, եզրակացություն տալուց հրաժարվելու և առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քր. օր 338-339 և 342 հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված նմուշների և իրերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրա կորստի, ոչնչացման կամ հափշտակելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին և նրա պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

1) Արթուր Պողոսյանի և Մանվել Ավետիսյանի վերը նշված հողամասերը համապատասխանում են սեփականության իրավունքի վկայականում առկա տվյալներին, թե ոչ, եթե ոչ, ապա ինչ ձևով է արտահայտվում անհամապատասխանությունը:

2) Արթուր Պողոսյանի և Մանվել Ավետիսյանի վերը նշված հողամասերը համապատասխանում են կադաստրային գործում առկա տվյալներին /նախագծին կամ այլ շինարարատեխնիկական փաստաթղթերին/ եթե ոչ, ապա ինչ ձևով է արտահայտվում անհամապատասխանությունը:

3) Ըստ կադաստրային փաստաթղթերի և Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանում առկա փաստաթղթերի, ինչպես նաև փաստացի առկա, որքան է կազմում Արթուր Պողոսյանի կողմից Անահիտ, Հայկ, Ալիսա, և Ռուդիկ Մինասյաններից առուվաճառքի պայմանագրի հիման վրա 28.12.2010թ. ձեռք բերված Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում գտնվող հողամասի չափը, որտեղ է այն գտնվում, որն է դրա ծածկագիրը:

4) Ըստ կադաստրային փաստաթղթերի և Արմավիրի մարզի Ջրառատի համայնքապետարանում առկա փաստաթղթերի, ինչպես նաև փաստացի առկա, որքան է կազմում Արմավիրի մարզի Ջրառատ համայնքում գտնվող Մանվել Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Ջրառատ համայնքի Մարգարայի խճուղի թիվ 17 հասցեում գտնվող հողամասի հողամասի չափը, որտեղ է այն գտնվում և որն է դրա ծածկագիրը :

5) Մանվել Ավետիսյանի և Արթուր Պողոսյանի վերը նշված հողատարածքների համադրում առկա է, թե ոչ, եթե այո, ապա ինչպես է համադրումը կատարվել:

Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մե չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն ձեռագրաբան- փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

3.Փորձագետին տրամադրել.

1) Թիվ 04-085-0216-0020 կադաստրային ծածկագրով կադաստրային գործի պատճենները <<91>> էջից /թիվ 1 փաթեթ/

2) թիվ 04-085-0216-0017 կադաստրային ծածկագրով կադաստրային գործի պատճենները <<149>> էջից /թիվ 2 փաթեթ/

Հետազոտման համար տրամադրվող օբյեկտները փաթեթավորված են և կնքված են ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնի <<Ծրարների համար>> նախատեսված կնիքով:

Քննիչ՝ Ն.Չիչակյան